ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԵՎԱԴԱՇՏԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

---

Թիվ 73

«19» դեկտեմբերի 2011թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ՝ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

*Հարգարժան պարոն Ղահրամանյան*

Ձեզ է ներկայացվում Արմավիրի մարզի Արևադաշտ գյուղական համայնքի 2011թվականի դեկտեմբերի 15-ի .N 2 որոշումը 2012թվականի բյուջեն է հաստատված համայնքի ավագանու կողմից:

Առդիր 79 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ՕՀԱՆՅԱՆ

12252-11
20 12 2011

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԱԴԱՇՏԻ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2011 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 15-Ի
թիվ 9-Ն ՈՐՈՇՄԱՆ

# ԱՐԵՎԱԴԱՇՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՒՂԵՐՁԸ

Արևադաշտ համայնքի ղեկավար Հովսեփ Օհանյանս ներկայացնում եմ Ձեզ 2012 թվականի բյուջեն, որը կազմում է համայնքի զարգացման քառամյա ծրագրը տվյալ տարվա բյուջետային խնդիրների լուծման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների պլանավորման հիման վրա: Համայնքի բյուջեն ներառում է ըստ եկամուտների և ծախսերի աղբյուրների: Գործառնական և տնտեսագիտական դասակարգման համապատասխան երեք տարվա կտրվածքով, այդ թվում եկամուտների և ծախսերի 2010թ. բյուջեն փաստացի, 2011թ. հաստատվածը և 2012թ. կանխատեսվող համապատասխան ցուցանիշներով:

| N | Եկամուտներ | 2012թ. | 2011թ. | 2010թ. |
|---|---|---|---|---|
| 1. | Հողի հարկ | 9200. 0 | 8070. 0 | 9048. 5 |
| 2. | Գույքահարկ փոխադրամիջոցների | 190. 0 | 150. 0 | 140. 0 |
| 3. | Գույքահարկ շենքերի և շին. | 90. 0 | 80.0 | ---- |
| 4. | Պետական պահուստի հողեր | 500. 0 | 585. 0 | 630. 0 |
| 5. | Գույքի վարձակալություն | 1480. 0 | 1400. 0 | 1333. 0 |
| 6. | Դոտացիա | 1177.3 | 1529. 2 | 1727. 4 |
| 7. | Տեղական տուրք | 50. 0 | 50. 0 | 50.0 |
| | Ընդամենը | 12687.3 | 11864.2 | 12929. 6 |

Բյուջեի եկամուտների հաշվին կատարվող ծախսերը ըստ գործառական դասակարգման

| N | Ծախսերը | 2012թ. | 2011թ. | 2010թ. |
|---|---|---|---|---|
| 1. | Գյուղապետարան | 12687.2 | 11864. 2 | 12930.4 |

Որից հետո ներկայացվեց բյուջեի հաշվին պահվող ապարատի հաստիքային թվաքանակի աշխատավարձի մասին և այդ ցուցանիշների համեմատական վերլուծությունը 2010թ. հաշվարկային ցուցանիշը, ինչպես նաև տեղեկություններ փաստացի աշխատողների թվաքանակի մասին:

| N | Պաշտոնը | Աշխատավարձի չափը 2012թ. | Աշխատավարձի չափը 2011թ. |
|---|---|---|---|
| 1 | Համայնքի ղեկավար | 120.000 դրամ | 90.000 դրամ |
| 2 | Համայնքի ղեկավարի տեղակալ | 72.000 դրամ | 72.000 դրամ |
| 3 | Համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղար 1.1-1 | 80.000 դրամ | 70.000 դրամ |
| 4 | Համայնքի ղեկավարի առաջատար մասնագետ (գլխավոր հաշվապահ) 3.2-1 | 78.000 դրամ | 68.000 դրամ |
| 5 | Համայնքի ղեկավարի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ (համակարգչային օպերատոր) 3.2-2 | 32.500 դրամ | 30.000 դրամ |
| 6 | Համայնքի ղեկավարի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ (հողաշինարար) 3.2-1 | 32.500 դրամ | 30.000 դրամ |
| 7 | Համայնքի ղեկավարի օգնական | 32.500 դրամ | 30.000 դրամ |
| 8 | Համայնքի ղեկավարի վարորդ | 32.500 դրամ | 30.000 դրամ |
| 9 | Գրադարանի վարիչ | 32.500 դրամ | 30.000 դրամ |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 512.500 դրամ | 462.500դրամ |

Բյուջեի եկամուտների հաշվին կատարված ծախսերը ըստ տնտեսագիտական դասակարգման:

| N | Անվանումը | 2012թ. | 2011թ. | 2010թ. |
|---|---|---|---|---|
| 1 | Աշխատավարձ | 6220.0 | 7448.5 | 8667.5 |
| 2 | Սոց վճար | 1500.0 | 1572.9 | 1880.4 |
| 3 | Գործուղման ծախսեր | 250. 0 | 250.0 | 250.0 |
| 4 | Գրասենյակային ծախսեր | 100. 0 | 100.0 | 80.0 |
| 5 | Սոց. օգնության ֆոնդ | 800. 0 | 300.0 | 200.0 |
| 6 | Էլ. էներգիայի ծախսեր | 917.3 | 400.0 | 350.0 |
| 7 | Ընդհանուր բնույթի ծառայ. | 1000.0 | 442.8. | 400.0 |
| 8 | Տրանսպորտային ծառ. վճար | 400. 0 | 250.0 | 250.0 |
| 9 | Տեղեկատվական ծառայություններ | 500. 0 | 500.0 | 202.5 |
| 10 | Այլ ծախսեր (պահուստային ֆոնդ) | 700. 0 | 600.0 | 650.0 |
| 11 | Մասնագիտական ծառայություններ | 300.0 | ------ | ------ |
| | Ընդամենը | 12687.3 | 11864.2 | 12930.4 |

Իսկական հետ ճիշտ է

Արևաշտ համայնքի ղեկավար՝ Հ. Օհանյան

Քարտուղար՝ Թ. Կարապետյան

Հաշվապահ՝ Ս. Քանդոյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԱԴԱՇՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

---

«15» ԴԵԿՏԵՄԲԵՐ 2011թ. N 2-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԱԴԱՇՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետով, 54-րդ հոդվածով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի երկրորդ մասով «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ և 33-րդ հոդվածներով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևադաշտի գյուղական համայնքի 2012 թվականի բյուջեն համաձայն հավելվածի:

2. Թույլատրել համայնքի ղեկավարին համայնքի բյուջեի կատարման ընթացքում կատարելու վերաբաշխումներ ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման ծախսերի նախատեսված հոդվածների միջև:

3.Սահմանել,որ փոփոխությունների հանրագումարը բյուջետային տարվա ընթացքում չի կարող գերազանցել չափաքանակների 50 տոկոսը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. Օհանյան

2011 թվականի 15 դեկտեմբերի
9 նիստ

գ. Արևադաշտ

# ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԱԴԱՇՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 15_Ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԱԴԱՇՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2012ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 2_Ն ՈՐՈՇՄԱՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևադաշտի գյուղական համայնքի ավագանու 2011 թվականի դեկտեմբերի 15-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևադաշտի գյուղական համայնքի 2012թվականի բյուջեն հաստատելու մասին» N 2-Ն որոշման ընդունումը պայմանավորված է «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետի պա հանջով, և դրա անհրաժեշտությունը կայանում է նրանում, որ այն ուղղված է համայնքի զարգացմանը նպաստելուն՝ բյուջետային համակարգի միասնականությունն ապահովող բյուջետային գործընթացի կազմակերպման համաձայնեցված սկզբունքների, բյուջետային դասակարգման, հաշվառման և հաշվետվության միասնական մեթոդաբանության հիման վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ՕՀԱՆՅԱՆ

2011 թվականի դեկտեմբերի 15

-

# ՏԵՂԵԿԱՆՔ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևադաշտի գյուղական համայնքի ավագանու 2011 թվականի դեկտեմբերի 15-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևադաշտի գյուղական համայնքի 2012 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 2-Ն որոշման ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու անհրաժեշտություն չկա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ՕՀԱՆՅԱՆ

2011 թվականի դեկտեմբերի 15